



*Հարցազրույց Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վարուժան Հոկտանյանի հետ*

**Օրերս հրապարակվեցին Թրանսփարենսի Ինթերնեշնլի 2009թ. կոռուպցիայի ընկալման համաթվի տվյալները: Աշխարհի 180 երկրների շարքում կոռուպցիայի տարածվածությամբ Հայաստանը կիսում է 120-125 տեղերը, նախորդ տարվա 109-114-ի փոխարեն: Փաստորեն, Հայաստանը 11 կետով նահանջ է ապրել: Ի՞նչ եք կարծում, ինչո՞վ է պայմանավորված Հայաստանի՝ անընդհատ հետընթաց արձանագրելը:**

Եթե հարցին գիտական ձևով մոտենանք, ապա առայժմ ասել, որ մենք հետընթաց ենք արձանագրում, ճիշտ չի լինի: Այս համաթվերը հաշվարկվում են՝ օգտագործելով մաթեմատիկական վիճակագրության մեթոդները: Այս տարի Հայաստանի Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ) 2.7 է, իսկ անցյալ տարի այն 2.9 էր, այսինքն՝ նահանջը 0,2 է: Սովորաբար, ելնելով հենց նշված մաթեմատիկական վիճակագրության մեթոդներին առնչվող նկատառումներից՝ կոնկրետ Հայաստանի պարագայում 0.3 և ավել փոփոխության դեպքում միայն կարող ենք ասել, որ նահանջ կա: Այժմ դա դժվար է ասել, բայց կա մի բայց, որն առայժմ մեզ մտահոգության առիթ է տալիս: Անցյալ տարի նույնպես նախանցյալ տարվա համեմատ Հայաստանի ԿԸՀ արժեքը նվազեց 0.1-ով, և եթե շարունակվի ևս մի քանի տարի այսպիսի դանդաղ և սահուն նվազում, մենք արդեն կարող ենք ասել, որ առկա է կոռուպցիայի մակարդակի աճի ընկալում: Առայժմ մի քիչ շուտ է խոսել, բայց ուրախանալու առիթ չկա երկու պատճառով՝ առաջինը, որ 2003 թվականից Հայաստանի ցուցանիշները տատանվում է երեքի շուրջ, այսինքն՝ անցած յոթ տարիների ընթացքում որևէ առաջընթաց չի արձանագրվել. դա կոչվում է լճացում: Երկրորդ, եթե մեր համաթվի արժեքն ութի շուրջը դուրսի, ես մտահոգվելու առիթ չէի ունենա: Դա կնշանակեր, որ մենք ամենաքիչ կոռումպացված երկրների շարքում ենք, ասենք՝ Հոլանդիայի, Ավստրիայի: Բայց մեր ընկալման համաթիվը երեքն է, իսկ երեք և ավելի ցածր արժեքը նշանակում է, որ երկրում կոռուպցիան ունի համակարգային բնույթ:

Սկսած 2003 թվականից Հայաստանը միշտ ընդգրկվում է Թրանսփարենսի Ինթերնեշնլի ԿԸՀ դասակարգման մեջ:

**Կոռուպցիայի դեմ պայքարելու առհասարակ ի՞նչ եղանակներ, ի՞նչ մեթոդներ պետք է կիրառի մեր երկրը, որ չի կիրառում: Ի՞նչ պետք է արվի, որ չի արվում: Կարծես թե մեր կառավարությունը բազմիցս բարձրացրել է այդ հարցը: Դասախոսների են բռնում կաշառք վերցնելու պահին և այլն:**

Փորձը ցույց է տալիս, որ կոռուպցիայի դեմ նման ձևով պայքարը (դասախոսներին, բժիշկներին, պաշտոնյաներին կաշառք վերցնելու պահին ձերբակալելը) առանձնապես արդյունավետ չի, թեև չենք կարող ասել, որ բացարձակ չի օգնում: Վերցնենք ԱՊՀ որոշ երկրները. այս տարի առաջընթաց գրանցվեց Ադրբեջանում, Ղազախստանում, Ռուսաստանում: Սրանք բոլորը ոչ ժողովրդավարական պետություններ են, և նրանց առաջընթացը գրանցվել է *միայն* շնորհիվ մանր կաշառակերության դեմ ավելի արդյունավետ պայքարի:

Մեզանում (ինչպես նաև նշված երկրներում) առաջնայինը քաղաքական կոռուպցիայի հարցն է: Կա մի այսպիսի թյուրըմբռնում, ես կասեի մոլորություն, որ կոռուպցիան միայն կաշառակերությունն է: Պայքարելով կաշառակերության դեմ՝ մենք ինչ-որ սահմանափակ արդյունքի կոռուպցիայի դեմ պայքարում կհասնենք, որը ես իհարկե չեմ ժխտում, և համամիտ եմ, որ Հայաստանում կաշառակերության դեմ ինչ-որ քայլեր արվում են:

Սակայն կաշառակերությունը կոռուպցիայի ընդամենը մի տեսակն է: Կոռուպցիան անձնական շահադիտական նպատակներով պաշտոնական դիրքի չարաշահումն է: Այն իր մեջ կաշառատվությունից բացի ներառում է և զանձագողությունը, և բյուջետային միջոցների փոշիացումը, և պաշտոնեկական կեղծիքը, և պաշտոնեական դիրքի չարաշահմամբ այլ հանցագործություններ:

Քանի որ կոռուպցիան համակարգային է, դրա դեմ պայքարը պետք է լինի համակարգային: Սա նշանակում է, որ մեկ-երկու դասախոսի բռնելով՝ դու հարցը չես լուծում: Պետք են նաև կանխարգելիչ միջոցառումներ, այսինքն՝ դու պետք է փորձես հասկանալ՝ ինչու կրթական ոլորտում կոռուպցիա կա, որոնք են դրա դրդապատճառները, ովքեր են դրանցում ներքաշված և այլն: Վերջապես, կոռուպցիայի դեմ պայքարն արդյունավետ չի լինի, եթե այն չի վայելում հասարակայնության աջակցությունը, քաղաքացիներին արդեն դպրոցական տարիքից չեն ներարկում կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքը և վարքագծային այլ հատկանիշներ:

### **Կոռուպցիայի դեմ պայքարը ի՞նչ ձևով պետք է լինի:**

Լուրջ պայքարը կլինի, երբ լինի քաղաքական կամք, իսկ քաղաքական կամքը շատերը չեն ընկալում կամ չեն ընդունում: Քաղաքական կամքն իսկապես շատ կարևոր է, և շատ արևելաեվրոպական երկրների օրինակը դա ցույց է տվել: Օրինակ՝ Լեհաստանը. նույն 1995 թվականին Լեհաստանում էլ, Հայաստանում էլ եղան վճռորոշ ընտրություններ: Լեհաստանում նախագահը Լեխ Վալենսան էր, որն այնտեղ կոմունիզմի դեմ պայքարի առաջնորդն էր, փայլուն կարիերա արած վառ անհատականություն, բայց պարզվեց, որ նրա տնտեսական քաղաքականությունը ժողովրդին չբավարարեց, և ընտրություններին նա պարտվեց: Նա ընդունեց իր պարտությունը, հեռացավ, և հիմա տեսնում ենք Լեհաստանը նորմալ զարգանում է: Նույն թվականին ինչ եղավ Հայաստանում՝ հանրաքվե, Ազգային ժողովի ընտրություններ, որոնք ուղեկցվեցին ընտրակեղծիքներով, բռնություններով և ընտրությունների ժամանակ բնորոշ քաղաքական կոռուպցիայի այլ դրսևորումներով: Եվ այդպես, մեր և Արևելյան Եվրոպայի ճանապարհները բաժանվեցին: Մեզ մոտ քաղաքական կոռուպցիայի հիմնաքարը փաստորեն դրվեց 1995-ին:

Հետագայում նույն բացասական երևույթներն ավելի խորացան, մասնավորապես 1998-ի իշխանափոխությունից հետո, ու մենք տեսնում ենք, որ ընտրություններն այլևս չեն ծառայում այն ֆունկցիային, որին պետք է ծառայեին, և մենք ունենում ենք քաղաքական կոռուպցիա, այսինքն՝ արվում են կեղծիքներ՝ քաղաքական օգուտներ ստանալու համար, իսկ այդ օգուտներն ի վերջո տրանսֆորմացվում են նյութական օգուտների: Դա առաջին խնդիրն է: Երկրորդ խնդիրը պետության մեջ քաղաքական և տնտեսական վերնախավերի սերտաճումն է, որի արդյունքում մենք ունենք պետության զավթման ցուցանիշով շատ վատ արդյունք, որը չունեինք 1998 կամ 2002 թվականներին: 2005-ից Հայաստանի այդ ցուցանիշը կտրուկ վատացավ, այսինքն՝ երկրի հանրային քաղաքականությունը՝ մաքսային, հարկային և այլն, որոշվում է ելնելով ոչ թե պետության, այլ որոշակի օլիգարխիկ խմբերի շահերից: Սա ևս կոռուպցիա է:

### **Ըստ Ձեզ, ընդդիմության և իշխանության շրջանակներում որքանով է առաջնահերթ խնդիր դիտվում կոռուպցիայի դեմ պայքարը:**

Իմիջիայլոց, ուսումնասիրել ենք 2007-ի խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցությունների նախընտրական ծրագրերը: Կոռուպցիայի դեմ պայքարին նրանցում տեղ չի հատկացվում, որովհետև միզուցե օրակարգում դա առաջնահերթ խնդիր չէ, և այդ առումով բնական է տեղ չհատկացնելը: 2007-2008 թթ. նախագահական և խորհրդարանական ընտրությունների ժամանակ ես չէի ասի, որ կոռուպցիան դարձավ համար մեկ խնդիրը: Մյուս կողմից էլ, Հայաստանում չկա այն ըմբռնումը, որ ի վերջո կեղծված ընտրությունը նույնպես կոռուպցիա է: Եվ նաև չկա արդար ընտրությունների նկատմամբ սոցիալական պահանջ: Մեր հասարակությունը բավականաչափ բարոյալքված է: Հաշվի առնելով այդ բարոյալքումը, հաշվի առնելով մեր ազգի՝ կոռուպցիայի նկատմամբ հանդուրժողականություն ցուցաբերելը՝ ես չէի մեղադրի մի կողմից ընդդիմությանը, որ նա չի դատում կոռուպցիան առաջին տեղում, որովհետև այսօր քաղաքական պայքար է, և ես չէ, որ պետք է քաղաքական գործիչներին ասեմ, որ եթե կոռուպցիան դնեք առաջին տեղում, հասարակությունը կգա ձեր ետևից: Եվ ես չեմ կարող ասել, որ ընդդիմությունը պարտվում է, որովհետև տեղ չի հատկացնում կոռուպցիային:

ԶՐՈՒՑԵՑ ՍԻՐԱՆՈՒՅՑ ՊԱՊՅԱՆԸ